



**Գործադիր տնօրենի տեղակալ
Ներքին ծառայությունների վարչության պետ**

Արսեն Քուչուկյան, բ.կ.մ., գ.բ/ք.մ.

Արսեն Քուչուկյանը ավագ կառավարման թիմի՝ մասնավորապես Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի և խնդրահարույց վարկերի հանձնաժողովի անդամ է: Նա մեծ վարկային հանձնաժողովի նախագահն է: Որպես ներքին ծառայությունների վարչության պետ՝ նրա պարտականությունները ներառում են տեղեկատվական տեխնոլոգիաների, համակարգերի, տեղեկատվության անվտանգությունը, ընդհանուր անվտանգությունը, ենթակառուցվածքները, ադմինիստրատիվ կառավարում, սակայն դրանցով չեն սահմանափակվում: Ունենալով ավելի քան տասնհինգ տարվա փորձ Վորլդ Վիժն ընկերակցության հետ՝ նա արդյունավետ կերպով համագործակցում է գործընկերների հետ ամբողջ աշխարհում և իրագործում հատուկ նախագծեր, ինչպես նաև ղեկավարում Սոցիալական հետազոտությունների վերահսկման համակարգը և Վորլդ Վիժն Հայաստանի հետ ինտեգրացիան:

Արսեն Քուչուկյանը միացել է Վորլդ Վիժն Հայաստանի միկրոֆինանսային նախագծին 1997 թ.՝ որպես համակարգչային ինժիներ և ի սկզբանե պատասխանատու էր դոնորներին ներկայացվող տվյալների բազայի զարգացման համար, որը դարձավ ՄԵՖ Ինտերնեյշնլի տեղեկատվական համակարգերի կառավարման առաջին համակարգը 1998թ.: 2003 թ., երբ ՄԵՖ-ը լիցենզավորվեց Կենտրոնական բանկի կողմից, կազմակերպությունում ամբողջ ինժեներական գործունեությանը զուգահեռ վարկերի տրամադրման նոր՝ eMerge համակարգը գործարկվեց, և ավելի ուշ՝ 2005 թ. փոխարինվեց ՀԾ բանկ ծրագրով: ՄԵՖ-ում ունեցած իր կարիերայի ընթացքում Արսեն Քուչուկյանը Ինֆորմացիոն համակարգերի կառավարման մենեջերից դարձավ տնօրենի տեղակալ, իսկ այնուհետև գործադիր տնօրեն, մինչ կազմակերպությունը փնտրում էր գործադիր տնօրեն բանկային ոլորտի կրթությամբ, ով կապահովեր հետագա կայուն աճ:

Արսեն Քուչուկյանը ստացել է կրթություն բարձր տեխնոլոգիաների ոլորտում, ստանալով բակալավրի և մագիստրոսի աստիճան Պետական ճարտարագիտական համալսարանում: 2009-2011 թ.թ. նա ավարտեց բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճանի ծրագիրը Հայաստանի Ամերիկյան համալսարանում (երեկոյան դասընթացներ համալսարանում):

Նախքան ՄԵՖ Ինտերնեյշնլին միանալը Արսեն Քուչուկյանն ուներ մոտ 10 տարվա կառավարման/ղեկավարման փորձ տարբեր կազմակերպություններում, մասնավորապես՝ որպես լոկալ կառավարիչ դանիական “PLS Consult”-ում, Ինֆորմացիոն բաժնի ղեկավար SEMA-ում, 7 տարի նախագծերի ղեկավար Երևանի համակարգիչների հետազոտության և զարգացման ինստիտուտում: